«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

**Ստուգողական աշխատանք 8**
Մայրենի, II կիսամյակ
3-րդ դասարան

Անուն, ազգանուն_____ Ամիս, ամսաթիվ_____

1. **Կարդա՛ տեքստը և պատասխանի՛ր հարցերին: [24] Վ11**

**Լավ թաքցրած մսի կտորը**

**Շնիկը մոտեցավ փիսիկին՝ բերանին մսի կտոր:**
**—Փիսի՛կ, խնդրում եմ, այս մսի կտորը պահի՛ր քեզ մոտ: Իսկ ես մի քիչ խաղամ բակում, հետո կգամ ու կուտեմ,- ասաց շնիկն ու հեռացավ:**
**—Լա՛վ, -ասաց փիսիկը:**
**Հենց այդ պահին մսին բզզալով մոտեցավ ճանճը: Փիսիկն իր թաթիկներով հեռացրեց նրան: Քիչ անց նկատեց,որ մի մեծ կատու ուշադիր նայում էր մսին: Նա ախորժակով լիզում էր շրթունքները:**
**—Օ՛յ, պետք է անմիջապես թաքցնել մսի կտորը, թե չէ սրանք կգողանան այն,-ինքն իրեն ասաց փիսիկն ու բերանը մոտեցրեց մսին:**
**Անցավ որոշ ժամանակ: Շնիկը եկավ: Նա տեսավ, որ մսի կտորը չկա:**
**—Փիսի՛կ, ո՞ւր է իմ միսը,-հարցրեց նա:**
**—Ես այն թաքցրել եմ,- ասաց փիսիկը:**
**—Վստա՞հ ես, որ այն ոչ ոք չի գտնի,-հարցրեց շնիկը:**
**— Մի՛ անհանգստացիր, ես այնպես եմ թաքցրել, որ ոչ ոք չի գտնի: Ես այն կերել եմ,- ինքնագոհ ասաց փիսիկը:**

1. **Շնիկն ինչո՞ւ մսի կտորը տվեց փիսիկին :[15] Վ11**

_____
_____

2. **Փիսիկն ինչո՞ւ որոշեց թաքցնել մսի կտորը:[15] Վ11**

_____
_____

3. **Ավարտի՛ր նախադասությունը: [10] Վ9**

Փիսիկը կերավ մսի կտորը, որովհետև _____
_____

4. Երկու-երեք նախադասությամբ գրի՛ր՝ ինչ կանի շնիկը։ Կշարունակվի արդյոք փիսիկի և շնիկի ընկերությունը։ [10] Վ22

_____

_____

_____

_____

_____

5. Տրված բառերը բաժանի՛ր բաղադրիչների։

[12] Վ18

մայրիկ=_____ + _____ դոնակ=_____ + _____

պահարան= _____ + _____ լուսավոր=_____ + _____

անպոչ=_____ + _____ դեղատուն=_____ + _____

6. Ընդգծի՛ր նախադասության գլխավոր անդամները։ [10] Վ19

Փիսիկն անմիջապես թաքցնում է մսի կտորը։

7. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը (գ կամ ք)։ [8] Վ14

ներ___և ձա___ուկ
հավա___վել մեջ___
օ___տակար ան___ամ
երբե___ միր____

8. Տրված պարզ համառոտ նախադասությունը դարձրո՛ւ պարզ ընդարձակ։ [5] Վ20

Շնիկը խաղում է։

_____

9. Տրված պարզ ընդարձակ նախադասությունը դարձրո՛ւ պարզ համառոտ։ [5] Վ20

Մեծ կատուն ախորժակով լիզում էր շրթունքները։

_____

_____

10. Աջ և ձախ սյունակներից գտի՛ր իրար հետ մտքով կապվող նախադասությունների զույգերը, շաղկապները, կազմի՛ր բարդ նախադասություններ և գրի՛ր։ [10] Վ26.1

Փիսիկը կերավ մսի կտորը։ [իսկ] Կատուն լիզեց շրթունքները։

Ճանճը մոտեցավ մսին։ [որովհետև] Նա վախեցավ մեծ կատվից։

_____

_____

_____